ՀԱՅԱՍ¬ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Հոդված 1. <<Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<վարչապետը>> բառով,

2) 4-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<Կառավարությունը>> բառով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում <<սպայական կոչումները շնորհում է Հայաստանի Հանրապետության Նախագահը>> բառերը փոխարինել <<զինվորական կոչումները շնորհում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ>> բառերով:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<2. Պետական լիազոր մարմնի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:>>:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: